ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4558-Ա «10» նոյեմբերի 2025 թ.

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ, 12-րդ կետի 1-ին ենթակետով և 101-104-րդ կետերով.

1. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացի կազմակերպման պատասխանատու ստորաբաժանումներ սահմանել՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մանկապարտեզներին (այսուհետ՝ Կազմակերպություններ): Պատասխանատու ստորաբաժանումներին վերապահել պայմանագրերի ամբողջությամբ կամ մասնակի լուծումները և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու, ինչպես նաև երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների վերադարձի գործառույթները:

2. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացի կազմակերպման գնումների համակարգող ստորաբաժանում սահմանել՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

3. Հաստատել՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանումների 2026 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով իրականացվող գնումների ցանկը՝ համաձայն հ.1 հավելվածի.

2) կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացի կազմակերպման գնման հայտի ձևաչափը՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանումներին՝ սույն որոշման հ.1 հավելվածում նշված գնումների շրջանակներում կազմել և ներկայացնել սահմանված կարգով հաստատված գնման հայտերը՝ համաձայն հ.2 հավելվածով սահմանված ձևաչափի:

5. Հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ ապահովել յուրաքանչյուրն իր մասով իր ենթակայության տակ գտնվող մանկապարտեզների 2026 թվականի կարիքների համար սննդի փաթեթի հավաքագրված գնման հայտերի

ներկայացումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն՝ սահմանել հսկողություն սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հայտերի ներկայացման նկատմամբ:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին՝

1) սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հայտերը ստանալուց հետո, ուսումնասիրել դրանց համապատասխանությունը գնումների մասին օրենսդրությանը և մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը կազմել և հրապարակել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանը.

2) ապահովել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանում ներառված ապրանքների գնումների գործընթացի կազմակերպումը, սահմանված կարգով պայմանագրերի կնքումը և դրանց տրամադրումը Կազմակերպություններին.

3) ապահովել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացների շրջանակներում հայտի ապահովման՝ երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով վերադարձը:

7. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մանկապարտեզների կողմից ներկայացված՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերի միասնականությունը:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կազմակերպությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների, հանրակրթության և վերահսկողության վարչությունների պետերի վրա:

9. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246